ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.10Ա ՇԵՆՔԻ Հ.40՝ 53.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի հ.10Ա շենքի հ.40՝ 53.9քմ մակերեսով բնակարանն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.12.2021թ. հ.15122021-01-0334 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հրայր Հակոբյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի հ.10Ա շենքի հ.40՝ 53.9քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց տրամադրել Հրայր Հակոբյանին:

Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի հ.10Ա շենքի հ.40՝ հասցեում գտնվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15122021-01-0334 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Աշխատավորների Դեպուտատների Երևանի 26 Կոմիսարների Շրջսովետի Գործադիր Կոմիտեի կողմից տրամադրված 18.01.1962թ հ.235 օրդերի՝ Մ. Ավետիսյան 4-րդ փողոցի հ.10Ա շենքի հ.40 (նախկին հասցեն՝ Վ.Զեյթուն հ.13 շենքի հ.40) հասցեում գտնվող բնակարանը հատկացվել է Հրայր Թելմանի Հակոբյանի ազգականներին՝ Անուշավան Մելիքի Հակոբյանին /պապ՝ մահացած 07.02.1986թ./, Ժենյա Գեղամի Միսակյանին /տատ՝ մահացած 03.05.1990թ./, Նորայր Անուշավանի Հակոբյանին /հորեղբայր՝ մահացած 07.10.1998թ./, Թելման Անուշավանի Հակոբյանին /հայր՝ մահացած 05.01.1984թ./ և Ռիմմա Անուշավանի Հակոբյանին /հորաքույր/, ով նոտարական կարգով հաստատված 30.08.2021թ. հ.3216 համաձայնագրով հրաժարվել է մասնակցել քննարկվող բնակարանի սեփականաշնորհմանը, տվել է իր համաձայնությունը՝ Հրայր Թելմանի Հակոբյանի անվամբ սեփականաշնորհելու վերաբերյալ:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Սիփան-1» համատիրության կողմից տրված 06.10.2021թ. տեղեկանքի համաձայն՝ Հրայր Թելմանի Հակոբյանը 1981 թվականից իր ընտանիքի անդամներով բնակվում են քննարկվող բնակարանում և վերջիններս տվել են իրենց համաձայնությունները՝ քննարկվող բնակարանը՝ Հրայր Թելմանի Հակոբյանի անվամբ սեփականաշնորհելու վերաբերյալ:

Համաձայն՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Քանաքեռ-Զեյթուն անձնագրային բաժանմունքի կողմից տրված 30.11.2021թ. հ.8/5-3109 տեղեկանքի՝ Հրայր Թելմանի Հակոբյանը քննարկվող բնակարանում հաշվառված է 2005 թվականից:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.498–Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համյանքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ